# Նոր սերնդի առաջին «ծիծեռնակը»

Նրա անունը մարզական լայն հասարակայնությանը հայտնի դարձավ, երբ Երեւանում անցկացված 32-րդ համաշխարհային շախմատային օլիմպիադայում ցույց տալով հոյակապ արդյունք՝ 12 հնարավորից 10 միավոր, իր խաղատախտակի վրա նվաճեց չեմպիոնի կոչումը եւ միաժամանակ լրացրեց միջազգային գրոսմայստերի առաջին միավորը:

Այս տարվա առաջին հատվածում մասնակցելով Կրասնոդարում անցկացված Ռուսաստանի գավաթի խաղարկության առաջին փուլի մրցումներին, գրոսմայստերական երկրորդ միավորը վաստակեց, եւ սկսվեց վիճակագիրների յուրօրինակ «վազքը» նրա ելույթների ետեւից...

Դուք, իհարկե կռահեցիք, որ խոսքը վերաբերում է երեւանցի միջազգային վարպետ Կարեն Ասրյանին, իսկ այսօր նրան հենց այնպես չհիշեցինք: Բանն այն է, որ Պետերբուրգում անցկացված շախմատի միջազգային խոշոր մրցաշարի ավարտից մեկ տուր առաջ, պարտության մատնելով ռուսաստանցի գրոսմայստեր Կուզմինին, Կարենը հավաքեց այնքան ցանկալի 6,5 միավորը, որը նրան հնարավորություն տվեց երրորդ անգամ հաղթահարել գրոսմայստերական արգելքը եւ այսուհետ կրել շախմատային աշխարհի այդ բարձրագույն կոչումը:

Կարեն Ասրյանը ծնվել է 1980 թվականի ապրիլի 24-ին, Երեւանում: 1996 թվականին լրացրեց միջազգային վարպետի նորման, մինչեւ 18 տարեկան շախմատիստների Հայաստանի բազմակի չեմպիոն է, 1994 թվականին չորրորդ տեղը գրավեց մինչեւ 14 տարեկան պատանիների աշխարհի առաջնությունում, 1996 թվականին մինչեւ 16 տարեկանների աշխարհի առաջնությունում արժանացավ արծաթե պարգեւի:

1996-97 թվականներին Կարենը հաղթող ճանաչվեց Մոսկվայում անցկացված Տիգրան Պետրոսյանի հիշատակին նվիրված միջազգային խոշոր մրցաշարում, իսկ 1996-ին նվաճեց նաեւ Գարրի Կասպարովի գավաթը:

Կարենն այս տարի ավարտեց մայրաքաղաքի թիվ 171 դպրոցը եւ այժմ ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի առաջին կուրսի ուսանող է: Ինչպես երեւում է, առաջինը խորհրդանշական թիվ է Կարենի համար: Առաջին դասարանում նա լրացրեց առաջին կարգայինի նորման, իսկ ահա այժմ էլ, առաջին կուրսում դարձավ միջազգային գրոսմայստեր:



1997-ին Կարենը սահմանեց նաեւ յուրօրինակ ռեկորդ՝ տարեսկզբին Մոսկվայում անցկացված Տիգրան Պետրոսյանի հուշամրցաշարում ինը հնարավորից վաստակելով նույնքան միավոր:

Կրասնոդարից հետո Կարենի մոտ սկսվեց անհաջողությունների յուրօրինակ շրջան: Ոչ Փարիզի բաց առաջնությունում, ոչ Հայաստանի առաջնությունում եւ ոչ էլ Ռուսաստանի գավաթի խաղարկության մյուս փուլերում նրան այդպես էլ չհաջողվեց հաղթահարել գրոսմայստերական երրորդ արգելքը: Դա, անշուշտ, պետք է բացատրել սոսկ հոգեբանական գործոններով եւ ահա, ինչպես ասում են, սառույցը վերջապես շարժվեց: Պետերբուրգում շվեյցարական մրցակարգով անցկացված ավանդական մրցաշարում, որտեղ հանդես էր գալիս 120 շախմատիստ, այդ թվում 40 գրոսմայստեր, նա իրականացրեց իր նվիրական երազանքը:

Կարենը մեր նոր սերնդի ներկայացուցիչներից առաջինն է, որն արժանանում է նման կոչման: Այժմ արդեն հերթը Լեւոն Արոնյանինն է, Վիգեն Միրումյանինը եւ մյուսներինը, որոնք շախմատի հայկական դպրոցի վաղվա հերթափոխն են՝ ներկայիս Մանիլայի համաշխարհային շախմատային օլիմպիադայի եւ այս տարվա աշխարհի եւ Եվրոպայի առաջնությունների բրոնզե մեդալակիր հավաքականի փոխարինողները: Իսկ որ այդ հերթափոխն արդեն գալիս է, կասկածից վեր է: